Ծուշանիկ Կուրղինյան

Ճնճղուկը

Սիրուն հարսը հաց էր փռում մաքուր բակում փռած փսիաթների ու տնագործ ջեջիմների վրա:

Երթանք կտցենք, ասաց մի ճնճղուկ իր բարեկամներին, որոնք թառած բարդու ճյուղերին նայում էին «թաժա» հացերին ու թքերը կուլ տալիս:

Ես շատ եմ սիրում վարդագույն բշտիկները կտցել, ասաց մի ջահել ճնճղուկ, այնքան բարակ են լինում այդ բշտիկները, որ իսկույն հալչում են բերանումդ:

Իսկ ես հաստլիկ եզներն եմ սիրում, պատասխանեց մյուսը:

Դե՛հ, լավ, լավ, սաստեց ամենահասակավորը . դատարկ խոսքերի ժամանակ չէ, հարձակվենք խմբով, առանց վայրկյան կորցնելու և մի լավ կշտանանք, ամեն օր «գետը գերան չի բերի»: Եթե հարսը մեզաշնից մեկն ու մեկին հալածե, մյուսներդ օգտվեցեք հանգամանքից կշտանալու . իրար մոտ կանգնեցեք ու խելքներդ գլուխներդ պահեցեք:

Հե՛լ, հե՛լ, հե՛լ, ճոճվում էր օդում սիրուն հարսի ճերմակ ձեռքը:

Մի տեսեք անպիտանին, կարծես մեր լեզուն հասկանում է, զայրացավ մի ճնճղուկ:

Ինչ սիրունն է . մի դրա վզի մարգարիտներին նայեցեք, զարմացավ մի պատանի:

Ձա՛յնդ, բաց բերան, սաստեց ամենամեծը, կշտանալ է հարկավոր . «սիրուն երեսին փլավ չեն ուտի»: Դե՛հ շարվեցեք կարգին և նշան տալու պես հարձակվեցեք:

Ճնճղուկները սրտատրոփ սպասում էին իրենց մեծի հրամանին, երբ կամաց բացվեց պարտեզի դուռը, ու մի երիտասարդ թաք կացավ ծառերի ու թփերի կանաչ պատնեշի հետևը:

Հե՛յ, հե՛յ, հե՛յ, դողաց հարսի ձայնը և նա մոռանալով իր փռած հացերը, հուշիկ քայլերն ուղղեց դեպի ծառերն ու թփերը: Ծեր ճնճղուկը վիզը երկարացրած նայում էր սիրուն հարսի հետևից ու ժպտում ինքնագոհ:

Դեհ, թռե՛ք, աղջիկներ, գոռաց նա, մի լավ կշտացեք:

Իսկ եթե հարսը քար քաշե, մորմոքաց մի անճար ճնճղուկ:

Հարսը կուշանա, ծիծաղեց ծերունին, դե՛հ, ձեզ տեսնեմ, չվախենաք:

Երբ հարսը երևաց, բշտած հացերից մի մի ցանց էր մնացել:

Հե՛յ, հե՛յ, հե՛յ, կանչեց նա և իբր ուզում էր քար քաշել աներես ճնճղուկների վրա, նրան մոտեցավ ծեր ճնճղուկն ու ծլվլաց կամացուկ:

Մի բարկանար, սիրուն հարս, արգելված պտուղը համով է լինում . . .

1903 թ .